

ՅԵՏ ՄԱՀՈՒ ՇՆՈՐՀԱՆԴԵՍ ԱՐԱ ԱՀԱՐՈՆԵԱՆ ՎԵՐՋԻՆ ԳԻՐՔԻ

Posted on September 25, 2022 by Keghart



Category: [Opinions](#)



Թղթակից.- Արա Ահարոնեան keghart.org-ի ջերմ սատարողներեն Էր՝ միաժամանակ յօդուածներով հանդէս կու գար մեր թերթին մէջ: Վերջերս, Օգոստոս 21-ին Փասատինայի (Քալիֆորնիա) ԹՄՄ Պէշկեօթիւրեան կեդրոնէն ներս տեղի ունեցաւ «Ռամկավար Ազատական Կուսակցութիւն» հատորին շնորհանդեսը եւ հանգուցեալին յուշ-երեկոն:

«Ռամկավար Ազատական Կուսակցութիւն» հատորը լոյսին եկաւ շնորհիւ Դոկտ. Մինաս եւ Նազիկ Գոճայեաններու շուրջ երկու տարուայ տքնաջան աշխատանքին: Վերջիններս իրենց խօսքին մէջ ըսին թէ առանձաշնորհուած կը զգան այսպիսի խիստ շահեկան



գիրք մը հրատարակելով, որով իրենք կրցան վաղամեռիկ Արա Ահարոնեանի տարիներու աշխատանքը եւ երազը իրականացնել՝ շնորհիւ ՌԱԿ Շրջանային Վարչութեան նիւթական աջակցութեան:

350 էջնոց այս գիրքը կը բաղկանայ չորս բաժիններէ, ունի 127 գլուխ, որոնց մէջ հեղինակը տուած է ՌԱԿ-ի նախակարապետը հանդիսացող Արմենական կուսակցութեան պատմութիւնը մինչեւ 1921-ի ՌԱԿ-ի հիմնադրութիւնը: Մնացեալ էջերուն մէջ բժախնդրութեամբ կը ներկայացուին սփիւռքի մէջ ՌԱԿ-ի գործումեութիւնը եւ անոր յարաբերութիւնները Հայաստանի երեք հանրապետութիւններու հետ: Ա. եւ Բ. Պատերազմներու եւ Պաղ պատերազմի տարիներուն կուսակցութիւնը ամեն ջանք թափած է սիրալիր յարաբերութիւններ պահելու Խորհրդային Հայաստանի կառավարութեան հետ՝ գաղափարական տարբեր բեւեռներու վրայ գտնուելով հանդերձ: Հատորին մէջ մանրամասնօրէն ներկայացուած են այդ մասին վկայող

տուեալներ եւ պատգամաւորական ժողովներու որոշումներ:

Այս հատորին մէջ կը կարդանք մեր ժողովուրդի վերջին 100 տարիներու պատմութիւնը, ազգային միաւորներու, կուսակցական համագումարներու, ՌԱԿ-ՀԲԸՄ, ՌԱԿ-ԹՄՄ-ի եւ հայերնիքի հետ ունեցած աշխատանքներու մասին:

Շնորհանդեսի ատեն ելոյթներ ունեցան մտերիմներ եւ կատարուեցաւ նաեւ գեղարուեստական յայտագիր մը:

**Նկար.- Յայտագրին մասնակիցներ եւ հեղինակին հարազատները
Հատորին կողքը**

There are no comments yet.